ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Անցկացման վայրը՝ ՄԱՐՏՈՒՆԻ

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Հերմինե Ղազարյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու հ.2 հիմնական դպրոց

Մարտունի 2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն 3
2. Գրական ակնարկ 7
3. Փորձարարական հետազոտություն.....10
3.1-Խմբի նկարագիրը 10
3.2-Փորձարարական դասեր.....10
3.2.1-Փորձարարական դաս-1.....10
3.2.2-Փորձարարական դաս-2.....11
4. Եզրակացություն 12
5. Օգտագործած գրականության ցանկ.....133
6. Հավելված.....144
Դասապլան-1 144
Դասապլան-2 177

1.Ներածություն

Մանկավարժության կարևոր կողմերից մեկը ուսումնառության գործընթացն է, որտեղ հետևյալ հիմնական հարցադրումներն են արվում՝ ե՞րբ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ի՞նչ: Ցանկացած ուսուցիչ պետք է իմանա՝ ե՞րբ և ինչո՞ւ է երեխան պատրաստ լինում դպրոցում սովորելու: Թերևս՝ այն ժամանակ, երբ բազմաթիվ անպատասխան հարցեր ունի, երբ անընդհատ բախվում է իր համար անծանոթ, նոր ու կարևոր խնդիրների, որոնց լուծման ճանապարհները չգիտի, քանի որ չունի բավարար գիտելիք, փորձ ու միջոցներ և իրեն դեռևս բավականաչափ ուժեղ, ինքնուրույն չի զգում: Նա սկսում է աղոտ կամ հստակ գիտակցել, որ դրանք լրացնելու, համալրելու կարիք կա, և իրեն պետք է բանիմաց մեկը, ով կկարողանա իրեն օգնել, ուղղորդել: Անտարակույս՝ դա ուսուցիչն է: Ուսուցիչն է որոշում ուսուցման ձևն ու բովանդակությունը: Ինչպե՞ս աշխատել, որ ավելի արդյունավետ լինի. աշխատել ամբողջ դասարանի հետ ֆրոնտա՞լ, թե՞ անհատական եղանակով: Դա բխում է դասավանդվող նյութի առանձնահատկություններից, ուսուցչի մշակած ռազմավարությունից, որոնք ուսուցման արդյունքն ու սպասելիքները ավելի շոշափելի կդարձնեն: Անհատական աշխատանքի դեպքում ուսուցիչը համագործակցության հնարավորությունները սահմանափակում է, որի պատճառով աշակերտները երբեմն դիմում են այնպիսի մերժելի միջոցների, ինչպիսիք են հուշելը, արտագրելը, թաքուն գրքից, տետրից կամ հեռախոսից օգտվելը, որոնք կանխվում են ուսուցչի կողմից: Նա իր աշխատանքում կիրառում է նաև ֆրոնտալ ձևը՝ աշխատանք ամբողջ դասարանի հետ: Հարցեր է ուղղում ողջ դասարանին՝ պարզելու համար, թե որքանո՞վ են յուրացրել նոր նյութը: Պատմության դասը արդյունավետ դարձնելու համար ուսուցիչն օգտվում է նաև տարբեր հնարներից ու միջոցներից, հանդես է բերում անհատական և ստեղծագործական մոտեցում, կիրառում է իր մասնագիտական գիտելիքները, օգտվում է տարբեր մեթոդներից, մեթոդիկաներից, իր և ուրիշների փորձից, ինքնատիպ աշխատաոճից և այլն: Այդ ամենը միտված է աշակերտների գիտելիքների ձեռք բերմանը, նրանց հմտությունների, կարողությունների ձևավորմանն ու համակողմանի զարգացմանը: Դրանից հետևում է, որ ուսուցիչը սոսկ տեղեկույթի կրող և հաղորդող չէ. նա աշակերտների մեջ զարգացնում է ինքնուրույն մտածելու, հսկայածավալ տեղեկատվության մեջ կողմնորոշվելու, մշակելու և դրանք նպատակային ու արդյունավետ օգտագործելու կարողություն:

Ուսուցչի մասնագիտական կարողությունների և բազմազան մեթոդների իմացության և դրանք կիրառելու, համադրելու հմտության շնորհիվ ուսումնական նյութը դառնում է ոչ միայն հետաքրքիր, այլև՝ մատչելի: Մանկավարժական տեխնոլոգիաների համակարգի

միջոցներով ուսուցիչը պլանավորվում է պատմության դասավանդման ուսումնադաստիարակչական գործընթացը՝ հանրակրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխան, որն ուղղված պետք է լինի երաշխավորված վերջնարդյունքի ձեռք բերմանը: Առարկայական ծրագրերի հիմնական մասի՝ չափորոշչի, հիմնարար սկզբունքը արդյունքին կողմնորոշվելն է: Նրանում ուսուցման նպատակները ձևավորված են կոնկրետ արդյունքների տեսքով, այսինքն՝ այն գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տեսքով, որոնք աշակերտը պետք է ցուցաբերի ուսումնական գործընթացն ավարտելուց հետո: Չափորոշչով սահմանված արդյունքների ու ստուգիչների տեսքով ուսուցչին տրվում է կոնկրետ ցուցում այն մասին, թե ինչպես և ինչ տեսանկյունից պետք է աշակերտներին մշակել տա թվարկման մեջ տրված իմաստային հարցերը: Այն մի ուղեցույց է, որը մատնանշում է, թե ինչպես պետք է ընթանա ուսումնական գործընթացը, որպեսզի աշակերտները գիտակցված և հանգամանորեն ձեռք բերեն գիտելիքը: Վերջինս հանդես է գալիս և՛ իբրև գիտություն, և՛ իբրև ուսուցման մեջ կիրառվող եղանակների և սկզբունքների համակարգ, որով պատմության ուսուցիչը պլանավորում է սովորողների գործողությունները, կանխատեսում հնարավոր դժվարություններն ու առաջացող հարցերը:

_ նախագծել ու պլանավորել ուսումնական պարապմունքը

_ գրել դասի համառոտ և ծավալուն պլանավորում

_ սահմանել ուսումնական խնդիրներն ու նպատակները

_ որոշել ուսումնասիրվող նյութի տեղն ու նշանակությունը ուսումնական դասընթացում

_ ինտեգրվող առարկաների կիրառման հնարավորությունները

_ որոշել և հիմնավորել ուսուցման կազմակերպման ձևը

_ ապահովել դասի առանձին փուլերի փոխհարաբերությունների հաջորդականությունը ու դասի տրամաբանական ամբողջականությունը:

Դասավանդումն իրականացնում է ուսուցիչը,որը պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան որի ընթացքում նա՝

_ որոշում է ուսումնական գործընթացի նպատակները, ձևավորում է սովորողների դրդապատճառներն ու պահանջմունքները,

_ հստակեցնում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ ըստ ուսուցման տարամակարդակ պահանջների,

_ կազմակերպում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեությունը ուսումնական նյութի շրջանակներում,
_ աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալմշակութային փորձը, անհրաժեշտ պայմաններ է ստեղծում սովորողների ակտիվության համար, ուղղոր¬դում, վերահսկում է նրանց գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ միջոցներ և տեղեկատվություն,
_ սովորողների ուսումնական գործընթացին հաղորդում է դրական հուզական բնույթ, ապահովում բարոյահոգեբանական դրական մթնոլորտ,
_ կարգավորում և վերահսկում է սովորողների ուսումնական գործունեությունը, գնահատում է այդ գործունեության ընթացքն ու արդյունքները:
Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է,մարդուն այնպես դաստիարակելը,որ համապատասխանի ժամանակակից պահանջներին:Այդ պատճառով էլ ուսուցումը այնպես պետք է կազմակերպել,որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ:
Երեխայի դաստիարակության, զարգացման ու կայացման գործում բացառիկ դեր ունի պատմության ուսուցումը, հայ երեխայի համար բացառիկ կարևոր է հայոց պատմությունից բավարար գիտելիքներ ունենալը, այդ իսկ պատճառով սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը հայոց պատմություն առարկայի համար սահմանված չափորոշիչներին համապատասխան, հաշվի առնելով նաև թե որո՞նք են հայոց պատմություն առարկայի դասավանդման խնդիրներն ու առանձնահատկությունները.

Հայոց պատմություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

_ Սովորողների մոտ վերլուծական և տրամաբանական մտածողության զարգացումը
_ Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն
_ Համաշխարհային պատմության կարևորագույն և հայության հետ առնչվող առանցքային դեպքերը ներկայացնել սահուն կերպով՝ շաղախելով դրանք ընդհանուր համատեքստում:

Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրներն են

_ Սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր մշակութային արժեքներին:
_ Ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը

և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
_ Ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում
_ Օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, վերլուծել երևույթները:
_ Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը:

Ուսուցման պլան կազմելիս, պետք է հաշվի առնել նաև ուսուցման այն մեթոդները որոնք առավել արդյունավետ կլինեն՝ հաշվի առնելով դասարանի առանձնահատկությունները:

2. Գրական ակնարկ

Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները;

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները:

Ուսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Պատմության դասավանդման ընթացքում մեթոդական ինչպիսի միջոցներ էլ կիրառվի կարևոր է ուսուցչի բանավոր խոսքը շեշտադրությունը, ներկայացման ձևը: Պատմության դասաժամերի ընթացքում պետք է աշակերտի մոտ ձևավորվի հայրենասիրություն, ազգային դաստիարակություն, պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումներ, հիմնախնդիրների վերաբերյալ վերհանում և վերլուծություն: Հայոց պատմություն առարկան տալիս է հայեցի մտածելու կարողություն, դաստիարակում է հայրենաիրությամբ: Ուսուցման ձևերն ու մեթոդները ի վերջո հանգում է երեխայի ուժերի ու հետաքրքրությունների զարգացման հարցին:

Բացի բուն դասագրքային դասից ուսուցիչը կարող է հանձնարարել նաև ընթերցել հատվածներ պատմական այս կամ այն սկզբնաղբյուրից: Սկզբնաղբյուրներ են համարվում պատմական նամակները, լուսանկարները, թերթային կամ գիտական հոդվածները, պատմական փաստաթղթերը: Պատմության դասի յուրացման ամրապնդման համար կարևոր է օգտագործել ուսուցչի կողմից կազմված կամ արդեն առկա թեստային առաջադրանքներ, որոնք ընդգրկում են պատմական կարևորագույն դեպքերն ու թվերը և քաղաքական գործիչների անունները, դասի թեմաներ և այլն: Հայոց պատմության դասընթացին, նաև թույլ առաջադիմություն ունեցող երեխաներին ներգրավելու համար, ես պլանավորեցի և անցկացրեցի երկու փորձարարական դաս «**Տարբերակված ուսուցման**» մեթոդով:

Տարբերակված ուսուցման նպատակը.

_ Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

_ Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

_ Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով:

Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Դրական կողմերը

Հագեցած դասերը, ծանր ուսումնական նյութերը խթանում են բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն միջին կամ ցածր առաջադիմություն կամա թե ակամա սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն: Ուստի անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով:Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝ միևնույն ունակությունների տեր

աշակերտներին նույն հոսքում ուսուցանելով:
Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը:

Բացասական կողմերը

Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ,այլ նաև թերություններ: Տարբերակված ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ուշադրության կենտրոնում է պահում միջին առաջադիմության տեր աշակերտներին՝ ուժեղների նկատմամբ կիրառելով տարբերակված ուսուցում, անհաղթահարելի խնդիր է առաջանում թույլերի նկատմամբ:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մարտունու թիվ 2 հիմնական դպրոցի 7-րդ դասարանում:

Քանի որ այս դասարանի աշակերտների մի ստվար հատված ունեն միջին և ցածր առաջադիմություն ու պասսիվ դրսևորում դասապրոցեսների ընթացքում, այդ պատճառով ես որոշեցի կիրառել «Տարբերակված ուսուցման» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն կարծիքներ հայտնելու, համեմատելու, վերլուծելու....

Այս դասարանում սովորում են 18 աշակերտ՝ 8 աղջիկ և 10 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Հայոց պատմություն առարկան անցնում են շաբաթական 2 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 4-րդ կամ 5-րդ ժամերին:

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի՝ թեման է «Անիի թագավորության տրոհումն ու անկումը» (տե՛ս դասապլան 1, էջ՝ 12):

Դասը սկսվեց, նախորդ թեմայի համառոտ քննարկմամբ և ամփոփմամբ, թեմայի վերաբերյալ հարցերով ու պատասխաններով, քննարկեցինք և պարզաբանեցինք թեմայի՝ սովորողների համար անհասկանալի հատվածները:

Քանի որ ընտրված է «Տարբերակված ուսուցման» մեթոդը, աշակերտներին բաժանեցի երեք խմբի՝ բարձր առաջադիմություն ունեցողները պատմեցին և վերլուծեցին թեման, շեշտելով նախորդ շրջանի իրադարձությունների հետ պատճառահետևանքնային կապը:

Միջին և թույլ առաջադիմություն ունեցող սովորողներին հանձնարարեցի թեստային աշխատանք՝ երկու տարբերակով:Թեստերը թեմատիկ բնույթի էին, ներառում էին Բագարտունյաց թագավորության ամբողջ շրջանը, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, ոչ միայն պատմեցին օրվա դասը, այլ նաև համեմատեցին մինչ այդ տեղի ունեցած իրադարձությունները, մատնանաշեցին Բագրատունյաց թագավորության անկման պատճառները՝ համամատեցին դրանք Արշակունյաց

թագավորության անկման պատճառների հետ, կատարեցին ինքնուրույն եզրահանգումներ:

Առաջադրանքների բնույթը սովորողներին ծանոթ էր, քանի որ մինչ այդ դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտները կատարել էին թեստային աշխատանքներ: Առաջադրանքները սովորողների կողմից կատարելուց հետո, հաղորդվեց հաջորդ դասը.«Բագրատունյաց թագավորության տնտեսությունը և պետական կառավարման համակարգը»:

3.2.2-Փորձարարական դաս-2

Դասը սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութը, որը բավականաչափ յուրացրել էին: Թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները, ներկայացրեցին դասի՝ իրենց հանձնարարված հատվածի վերաբերյալ կատարած առաջադրանքները, որոնք քննարկվեցին, և առակա որոշ սխալները շտկվեցին հենց աշակերտների կողմից,քննարկման արդյունքում՝ իմ կողմից տրված ուղղորդող հարցերի շնորհիվ:

«Մտագրոհի» մեթոդով ստուգեցի դասարանի գիտելիքները նախորդ թեմայի վերաբերյալ: Այնուհետև օգտագործելով «Տարբերակված ուսուցում» մեթոդը աշակերտների յուրքանչյուր խմբի հետ, սկսեցի աշխատել իրենց համար ընտրված տարբերակված ուսուցման մեթոդով:

Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, քննադատական մոտեցմամբ վերլուծեցին և մեկնաբանեցին Բագրատունյաց թագավորության տնտեսական ու պետական կարգը, կառավարման համակարգն ու ռազմական կարգը և կարևոր իրադարձություններն ու տարեթվերը գրեցին գրատախտակին՝ թույլ և միջին առաջադիմություն ունեցող աշակերտների համար: Այնուհետև գրատախտակը բաժանվեց երեք մասի և յուրքանչյուր խումբ դասի իրեն հանձրարված հատվածից գրեց թեման բնորոշող գլխավոր հասկացությունները:

Քանի որ գլխավոր թեման եզրափակվում էր, հանձնարարվեց ամփոփում: 6 աշակերտներ ստացան միավորային գնահատական:

4. Եզրակացություն

Աշակերտների ակտիվությունը բարձրացնելու համար անցկացրեցի երկու փորձարարական հետազոտական դասեր՝ «Տարբերակված ուսուցման» մեթոդով, որտեղ պասիվ աշակերտներն իրենց դրսևորեցին բավականին ակտիվ, իսկ թույլ և միջին առաջադիմություն ունեցողները համեմատաբար ավելի հաջող, ամբողջ դասարանը ներգրավվեց դասապրոցեսների լիարժեք կայացմանը, հաղորդվեցին գիտելիքներ, կարծիքներ: Միջին և թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները կատարեցին անհատական տարբերակված թեստային առաջադրանքներ՝ 2 տարբերակներով: Ամեն հաջորդ տարբերակված դասաժամին ամբողջ դասարանի համար քննարկվեց տարբերակված թեսթերի սխալները, տրամադրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Աշակերտները խոստովանեցին, որ իրենց շատ դուր եկավ այս մեթոդը: Այսպիսով, ես եկա այն եզրակացության, որ «Տարբերակված ուսուցման» մեթոդն օգնեց աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը, պասիվ աշակերտների ներգրավածությանն ու ակտիվացմանը, նպաստեց նրանց հետաքրքրությունների մեծացմանն ու գիտելիքների ավելացմանը:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով:

Միաժամանակ համոզվեցի, որ պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան պլանավորված և ճիշտ ընտրված մեթոդով անցկացված ուսումնական և դաստիարակության գործընթացը կարող է բավականին արդյունավետ լինել, հատկապես առաջադիմության միջին և ցածր մակարդակ ունեցող սովորողների համար:

5. Օգտագործած գրականության ցանկ

1. Բալյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Եր., «Լույս», 1983
2. Նալչաջյան Ա., Հոգեբանական բառարան, Եր., «Լույս», 1984
3. «Փոքրիկ քայլերի հեղափոխությունը», Կանաչ տուն՝ Ծիածանային պարտեզ, խմբ. խորհուրդ՝ Ազարյան Կ., Բարիկյան Կ., Եր., 1998
4. Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ, https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf
5. Հայոց պատմություն, դասագիրք 7-րդ դաս., Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Եր. 2013
6. Рогов И., Настольная книга практического психолога, книга 2, М., 2002

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Հայոց պատմություն	Ամսաթիվ	16.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	VII

Թեմա	«Անիի թագավորության տրոհումն ու անկումը» Կատարել թեստային և գործնական աշխատանք Ուսուցանել «Բագրատունյաց թագավորության տնտեսությունը և պետական կառավարման համակարգը» թեման
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, տետր,թեստեր
Դասի նպատակը	Ծանոթանալ Հայաստանի միջնադարյան պատմության մի կարևոր շրջանի հետ Ծանոթանալ Անիի թագավորության անկման պատճառների, դրան նախորդած իրադարձությունների հետ Ձևավորել հմտություններ հայոց պատմությունից անհրաժեշտ հատվածներ վերլուծելու, մեկնաբանելու Արժևորել հայոց միջնադարյան պատմությունը
Վերջնարդյունքները	Տիրապետի հայոց միջնադարյան պատմությանը Կարողանա ինքնուրույն վերլուծել ու մեկնաբանել իրադարձությունները Համեմատի՝ հակադիր կամ նույնանման իրադարձությունները Ձևավորի քննադատական մտածողություն Դրսևորի հետաքրքրություն հայոց պատմության նկատմամբ Արժևորի հայոց պատմությունը

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման	
10ր	Աշակերտները «Տարբերակված ուսուցում» մեթոդով սկսեցին պատասխանել օրվա դասը Վերլուծեցին, բնութագրեցին,համեմատեցին, կարծիքներ հայտնեցին:	Հարցադրումներով պասիվ աշակերտներին և ևս ներգրավվել ընդգրկել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Թագավորությունը հզորության գագաթնակետին: Գագիկ I Ի՞նչ հետևանքներ ունեցավ Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթի ապստամբությունը Գագիկ I-ի դեմ Ինչպե՞ս ավարտվեց Ծումբ գյուղի ճկատամարը	«Տարբերակված ուսուցման»մեթոդ
5ր	Ամփոփեցին և վերլուծեցին թեման: Կարևոր իրադարձություններն ու տարեթվերը գրեցին գրատախտակին	Կատարել ճշտումներ և շտկումներ Ուղղորդել	Ո՞վ էր հայոց սպարապետը Գագիկ I-ի կառավարման ժամանակ	

			Ի՞նչ Տիտղոս էր կրում Գագիկ Ի-ը Ո՞վ էր Կատրամիդեն և ի՞նչ կառույցներ հիմնվեցին նրա նախաձեռնությամբ	
10ր	Դասը բանավոր պատասխանեցին և պատճառահետևանքայի ն կապը՝ նախորդ շրջանի հետ մատնանշեցին	Հետևել աշակերտների ն, ուղղություն ցույց տալ, պատասխանել հետաքրքրող հարցերին	Ո՞վ էր Անի քաղաքի արքունի ճարտարապետը Ի՞նչ հետևություններ կատարեցիր թեմայից	«Տարբերակված» ուսուցման» մեթոդ
15ր	Կատարեցին թեստային աշխատանքը և հանձնարարված առաջադրանքները		Ձեզ դուր եկա՞վ արդյոք «Տարբերակված ուսուցման» մեթոդը	
10ր	Ընթերցեցին նոր դասի տեքստը	Նոր թեմայի հաղորդում Հանձարարություն ներ տալ Պատասխանել աշակերտների հարցերին		

Դասապլան-2

Առարկա	Հայոց պատմություն	Ամսաթիվ	20.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	VII
Թեմա	«Բագրատունյաց թագավորության տնտեսությունը և պետական կառավարման համակարգը» Կատարել թեստային և գործնական աշխատանք Պատասխանել դասը բանավոր Ուսուցանել – Հանձնարարել բաժնի ամփոփում						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, տետր, թեստեր						
Դասի նպատակը	Ծանոթանալ Բագրատունյաց Հայաստանի պատմությանը Իմանալ Բագրատունի գահակալներին Իմանալ հայտնի ճակատամարտերը Իմանալ ժամանակի հայտնի ռազմական գործիչներին Ծանոթանալ Բագրատունի արքաների շինարարական գործունեությանը						
Վերջնարդյունքները	Գիտակցել Բագրատունի արքաների շինարարական նշանակությունը հայ ժողովրդի համար Իմանալ միջնադարյան Հայաստանի հայտնի քաղաքներն ու կոթողները Արժևորել հայոց պատմության այդ շրջանը Ցուցաբերել հետաքրքրություն հայոց պատմության Բագրատունյաց շրջանի նկատմամբ						

Գործողութ- յուններ/ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Անիի թագավորության տրոհումն ու անկումը	Հարցադրումների մեթոդ
10ր	Օգտագործելով «Տարբերակված» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ կատարել թեսատային աշխատանքը,դասագրքի վարժությունները և բանավոր պատասխանել դասը Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, բնութագրեցին կերպարները , կարծիքներ հայտնեցին Ծանոթացան Ժամանակի հայտնի հոգևոր, ռազմական և քաղաքական դեմքերի հետ	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրու-թյունն ու շահագրգռվածությունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Ի՞նչ իրավիճակ ենթակա թագավորություններ էին առաջացել Անիի թագավորության անկման նախօրյակին	Մտագրոհ «Տարբերակվա ուսուցման» մեթոդ

			Ի՞նչ իրավիճակ էր Հայաստանում Գագիկ Ի-ի մահից հետո	
10ր	Քննարկեցին, համեմատեցին հայ և այլազգի գործիչներին Բացեցին գրքեր Կարդացին նոր նյութի համապատասխան տեքստը	Հետևել դասին Հետևել աշակերտներին Կատարել ճշտումներ և շտկումներ	Ի՞նչ պահանջ ներկայացրեց Պետրոս կաթողիկոսին Վասիլ II-ը Տրապիզոնի բանակցությունների ժամանակ Ինչպե՞ս ես գնահատում Աշոտ IV-ին և Հովհաննես-Սմբատին	Բանավոր կրկնության մեթոդ
10ր	Ամփոփեցին 1021-1045թթ իրադարձությունները Մի քանի աշակերտներ քննարկեցին դրանց ազդեցությունը մայիսյան հերոսամարտերի վրա Պատասխանեցին գրքում գրված հարցերին(հարցեր և առաջադրանքներ բաժնից) Վերջում ամփոփեցին ընդհանուր բաժինը	Կատարել ճշտումներ և շտկումներ Հարցադրումներ	Ինչպե՞ս ես գնահատում Գագիկ II-ի կարճատև կառավարման ժամանակաշրջանը Սիրու՞մ ես Հայոց պատմություն	«Տարբերակված ուսուցման» մեթոդ